

ՀՀ Լոռու մարզպետի ընդլայնված խորհրդակցության

07.11. 2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Գ.Մարկոսյան -մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյան -գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Հ.Պապոյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ա.Գասպարյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական
- Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական
- Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական
- Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Նախորդ ժամանակահատվածում կատարված աշխատանքների մասին:
/Ձեկ.՝ Գ.Մարկոսյան/
2. Սեփական եկամուտների հավաքագրման մասին:
/Ձեկ.՝ Դ.Մանուչարյան/
3. Սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին:
/Ձեկ.՝ Ա.Ջանազյան/
- 4.Դպրոցներում շինարարական աշխատանքների ընթացքի մասին:
/Ձեկ.՝ Ա.Ջանազյան/
5. Սուբվենցիոն ծրագրերի պետական մասնաբաժնի վճարման ընթացակարգերի մասին:
/Ձեկ.՝ Հ.Պապոյան/
6. Մանկապարտեզների սննդակարգի հետ կապված խնդիրներ:
/Ձեկ.՝ Ա.Մխիթարյան/
- 7.Դպրոցների սննդի կետերի սանիտարահիգիենիկ վիճակի մասին:
/Ձեկ.՝ Ռ.Հարությունյան/
8. Ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի մասին:
/Ձեկ.՝ Ա.Դեմիրջյան/

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ.Պապոյանին՝
Քննարկել և ներկայացնել առաջարկություններ մարզի համայնքների բյուջեների կազմման հետ կապված խնդիրների, եռամսյակային բաշխումների համաշափության և այլ հարցերի վերաբերյալ:
2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

Առաջարկել մարզի հանրակրթական դպրոցների տնօրեններին և վերահսկել վերջիններիս կողմից իրականացվող շինարարական և վերանորոգման աշխատանքներ կատարելուց առաջ նախագծա-նախահաշվային փաստաթղթեր ներկայացնելու, շինարարական նորմերի պահպանման և դրանց հիմնավորման վերաբերյալ գործընթացը, ինչպես նաև աշխատանքների ավարտից հետո ուսումնասիրել աշխատանքների որակը և համապատասխանությունը շինարարական նորմերի պահանջներին:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին, աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա.Մխիթարյանին՝

Անհրաժեշտ հսկողություն իրականացնել դպրոցներում և նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանիտարահիգիենիկ վիճակի պահպանման նկատմամբ, ինչպես նաև դիմել դպրոցների տնօրեններին՝ օգտագործվող սննդակարգի թույլատրելիության վերաբերյալ վերջիններիս կողմից վերահսկողություն իրականացնելու նպատակով:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պաշտոնակատար Ա.Շահվերդյանին՝

ա/ 1 ամսյա ժամկետում ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն մարզում ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի վերաբերյալ:

բ/ Անհրաժեշտ բացատրական և մեթոդական աշխատանքներ իրականացնել (նաև գանգվածային լրատվամիջոցներով) մարզում հայտնաբերված հարավաֆրիկյան ցեցի տարածման դեմ իրականացվելիք կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

1 շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն մարզում գործող ձեռնարկությունների վերաբերյալ:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ԴՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ԴՈՒԿԱՍՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99/